ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

15. 10. 2022 *ք. Իջևան*

Մասնակցում էր ֆակուլտետի գիտական խորհրդի 24 անդամներից 14-ը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի ամփոփում (զեկուցող՝ **Կ.Պողոսյան**):
2. 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ ստուգումների և քննությունների նախապատրաստական աշխատանքների մասին (զեկուցող՝ **Կ.Պողոսյան**):
3. Ավարտական աշխատանքների թեմաների հաստատում (զեկուցող՝ **Կ.Պողոսյան, ամբիոնների վարիչներ**):

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի մասին ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Կ. Պողոսյանը նշեց, որ 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանը (2 լուծարքային շրջաններով հանդերձ) ավարտվել է 2022 թ. սեպտեմբերի 22-ին: Այն իրականացվել է սահմանված կարգով, բողոքարկումներ չեն եղել:

Քննաշրջանի արդյունքում առկա ուսուցման համակարգի 1, հեռակա ուսուցման համակարգի 4 ուսանող ներկայացվել են հեռացման: Առկա ուսուցման համակարգից 3 ուսանող («Հայոց լեզու և գրականություն», «Պատմություն», «Հոգեբանություն» մասնագիտությունների) տեղափոխվել է հեռակա ուսուցման համակարգ: 2 ուսանող («Հոգեբանություն» մասնագիտության) հեռակա ուսուցման համակարգից տեղափոխվել է առկա ուսուցման համակարգ:

Ըստ 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի (2 լուծարքային շրջաններով հանդերձ) արդյունքների՝ Հումանիտար գիտությունների ֆակուլտետի առկա ուսուցման ընդհանուր առաջադիմությունը կազմում է 99.7 % (2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակում կազմել է 98.97 %):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի մասին Կ.Պողոսյանի հաղորդումն ընդունել ի գիտություն և արդյունքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցող Կ. Պողոսյանը նշեց, որ 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ ստուգումները և քննությունները, ժամանակացույցի համաձայն, կիրականացվեն 2022 թ. հոկտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 2-ը (ներառյալ): Ֆակուլտետում իրականացվել են նախապատրաստական անհրաժեշտ աշխատանքներ: Մասնավորապես՝ կազմվել են ընթացիկ ստուգումների և քննությունների կազմակերպման ժամանակացույցները, դրանք քննարկումների նպատակով տրամադրվել են ամբիոններին, ապա ներկայացվել են հաստատման, ուղարկվել կայքում տեղադրման, դրանց մասին տեղեկացվել են դասախոսները և ուսանողները: Ֆակուլտետին են տրամադրվել ընթացիկ քննությունների տետրերը: Նախատեսվել է մեծ կուրսերի գրավոր քննություններն անցկացնել տեսախցիկներով կահավորված լսարաններում: Հումանիտար գիտությունների ֆակուլտետը պատրաստ է քննաշրջանի իրականացմանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ ստուգումների և քննությունների նախապատրաստական աշխատանքների ընթացքը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի մասին զեկուցեցին ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը և ամբիոնների վարիչները: Տիկին Պողոսյանը նշեց, որ 2022-2023 ուստարում ֆակուլտետում կան առկա ուսուցմամբ ավարտական կուրսեր բոլոր՝ 7 կրթական ծրագրերով («Հոգեբանություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», «Ռուսաց լեզու և գրականություն», «Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն»), իսկ նախորդ ուսումնական տարում ֆակուլտետում առկա էին 4 ավարտական կուրսեր:

Հեռակա ուսուցման համակարգում ֆակուլտետում կան երեք ավարտական կուրսեր՝ «Պատմություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» և «Հոգեբանություն» կրթական ծրագրերով:

Ավարտական աշխատանքների թեմաները նախապես քննարկվել են մասնագիտական ամբիոնների նիստերում: Ամբիոնների վարիչները նշեցին, որ իրենց կողմից ստուգվել է իրենց ամբիոնների դասախոսների կողմից առաջադրված թեմաների համապատասխանությունը կրթական ծրագրերի վերջնարդյունքներին, իրականացվել են անհրաժեշտ փոփոխություններ, շտկումներ, այնուհետև ավարտական աշխատանքների թեմաները ներկայացվել են ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի ավարտական աշխատանքների թեմաները:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Կ. Պողոսյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. Վանյան